

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱՆՈՑ Ի ՀՌՈՍԿԱՑ

•

**ՏԵՂԱԿԲԱԿԱՆ.** — Հռոմեայի բերդը կը գտնուէք Կիլիկիոյ արևելեան հողմը, Եփրատի արևմտեան եկեղեցին վրայ, Այնթապ քաջարաքէն ոչ շատ հեռու։ Ունէք իիսոստաք Կիլիմայ, այդ պատճառաւ Ենորհալին զայն կ'որակէ ստօթազին քարանձաւ (Ընդհանրական էջ 8)։ Հոն կային երեք եկեղեցին կառուցուած յանուն Ս. Գրիգորի, Ս. Աստուածածին և Ս. Փրկչի (Ազգ. Հանդ. 1913, թ. 1, էջ 68)։

**ՊԱՏՄՈՒԱԿԱՆ.** — Այդ բերդը նախապէս կը պատկանէք Փոանի կիշտանի մը՝ մասմիկս, որուն մահէն յետոյ Գրիգոր Գ. Կաթողիկոս Պահլաւանի (1113-1166) անոր այլիէն, որ Կոստանդինի իշխանապետի աղջիկն ու Թորոս Բ. իշխանապետի (1145-1163) Կորաքոյրն էր, ստացաւ բերդը (1149), հոն հաստատէլու համար հայոց հայրապետանոցը (Արմատ 95։ Կիլիկիաբան, Սովք, Տլուք և Հռոմեայ, Վիեննա, 1904, էջ 63։ Ազգակ. էջ 1374-7)։

Հայոց հայրապետներէն Հռոմեայի մէջ նստան յաջորդաբար տաս անձեր, մօտ մէկ ու կէս գար տեղողութեամբ (1149-1293)։ Առողուն են։

1. — Գրիգոր Գ. Պահլաւոնի (1149-1166). — Սովք գղեակէն փոխադրուեցաւ Հռոմեայ, և հոս շինեց գմբէթաւոր և հըրաշագան եկեղեցին մը (Կիր. 63)։

2. — Ս. Ներսէս ննորհափ (1166-73). — Հոս գրեց իր աննստան Ծնդհանրականը, եւ ուրիշ շատ կրօնական երկեր, արձակ կամ տաղաչափեալ։ Իր գերեզմանը դարձաւ նշանաւոր ուխտատեղի այդ հողմերու ժուղարգներուն՝ քրիստոնեայ կամ այլազնեն (Ալիշան, Ծնդհանի և պարագայք իւր, Վենետիկ, 1873, էջ 487։ Կիլիկիա, Պետրոպոլիտ, 1894, էջ 374-5)։

3. — Գրիգոր Գ. Տղայ (1173-93). — Սա հոյակապ եկեղեցի մը շինեց յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի, արևելեան Հայ-

յաստանի եկեղեցիներուն նմանութեամբ, և անոր մէջ պատրաստեց երկու գերեզմաններ իր հօրեղբայրներուն Դիբդորիսի և Ներսէսի համար, Սովորէն հոն փոխադրել տուաւ նաև Գրիգոր Վկայասէքի նշխարաները (Սամ. 139։ Միլի. Ասորի, Շար. էջ 39)։ Իր օրով գումարուեցաւ (1179) Հռոմեայի ժողովը, զրագելու յունական եկեղեցին ենտ միաբանութեան խնդիրով, նոյն տարին ն. Լամբրոնացի թարգմանած է Օսկիաննու Յայանութեան մեկնութիւնը Հռոմեայի մէջ։

4. — Գրիգոր Ա. Քարավիճ, Տղայ (1193-94). — Միլի. Ասորի Յաղագի Թահնասայ յութեան գրուած քին շարայարութիւնը հրացողը (էջ 39), ինչպէս նաև Կիրակոս (էջ 69), այս Գրիգորին տուած են Տղայ մակագիրը, որ, սարիգին նայելով, շատ աւելի յարմար կուգայ թարագէժին քան թէ իր նախորդին։ Այստեղ ննդուութեամբ ձերբակալուեցաւ Գրիգոր Միլի Օովկաննէն եպիսկոպոսն և տարուեցաւ Լեռնի մատու Ասամայց Կոպիտառի բերդին մէջ քանատարկել երթատարդ կաթողիկոսը, որ շատ չանցած քարագէժ վախճանեցաւ (Արմատ էջ 106-7)։

5. — Գրիգոր Զ. Ապիքրեա (1194-1203). — Շո ութանամեայ ձերունին Ապիքրատաբախոր ունեցաւ Կիլիկիոյ մեծանուն իշխանապետ Լեռնը օծելու թագաւոր հայոց (1199)։ Իրմով վերջաց և Բ. Պահլաւականիներու տօնմէն սերած հայրապետներու շարքը, եօթ կաթողիկոսներով 138 տարուան զջան մը բոլորելէ յետոյ, որ զարմանալի զուգագիպութեամբ — ինչպէս զիտած է Ալիշան — հաւատար կուգայ պարթեաւազուն ասաշին հայրապետներու թէ թիւին և թէ բոլորած ժամանակաշըրքանին — 302-439 — (Ծնդհանի էջ 14)։

6. — Օովկիաննէս Զ. Սեծարույո (1203-1221). — Սա ամրացուց Հռոմեան ժամանական ժամանական մեծ գումարներ, զորս ձեռք բերելու համար քակել տուաւ Պահլաւոնի կամ թողիկոսներու շինել տուած եկեղեցական թանկապնի սպանները (Սամատ 115)։

7. — Կոստանդին Ա. Բարձրերեղյոֆ (1221-1267). — Նշանառ եղաւ իր գրասիրուաթեամբ, քաջալերեց գրիներն ու ծալկողաները և իր ըրջանին Հռոմեան գարձաւ լոսիք վառարան։ Ան օրինակել տուաւ բարձ-

մաթիւ Աւետարաններ և նույիրեց զանազան վանքերու, եկեղեցիներու և երեխի անհատներու ։ Իր օրով Հռոմէլայ այցելեց Յովհաննենի Գուանդինի հրաշագործ կուսակրօն Բաւանան և հայրապետին փափառված այնտեղ մաց ժամանակ մը, և ապա զախճանիլով թաղումեցաւ անոր (Կիր. 205)։

8. — Յակոբ Ա. կայսերի (1268-1286)։ — Բարձր գնահատելով Ծնորհարիի Ընդհանրականին արժէքը, օրինակել տուաւ զայն և զրկեց ամէն կողմէ։ Իր նախորդին պէտ եւ զաւ քաջալերող և հնգանաւորող զրիչներու և մանրանկարիչներու, և Հռոմէլայի հայրապետանոցը պահեց իր նախանձելի բարձրութեան վրայ։

9. — Կոստանդին Բ. Կատուկեցի (1281-89)։ — Ալբոն բարձրանալէն մի քանի տարի վերջ Հեթում թ. ի կողմէ Սիսի մէջ գումարուած ժողով մը զինքը պաշտօնանկ ըրաւ զանազան ամբաստանութիւններով (Ազգպ. Յօդ. 1182)։

10. — Ստեփանոս Դ. Հռոմէլայեցի (1290-93)։ — Իր օրով Եղիպատոսի սուլթանը Աշրաֆ գրաւեց Հռոմէլան (1292) և զինքը 12 եպիսկոպոսներու, քաղմաթիւ քանանաներու և անթիւ քրիստոնեաներու հետ գերի տարաւ Եղիպատոս Գերի տարուեցան նաև Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը և Վանկոյի հոչակաւոր Ս. Նշանը (Հայկ. 501-2), Հեթում թ. ստիպուած մէջ գումարներ վընարեց Եղիպատոսիներուն և ազտուց աւարի առնուած սրբութիւնները։

ՄԾԼԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — Հռոմէլայի հայրապետանոց մին եղաւ Կիլիկիոյ մշակութային մեծագոյն կեդրոններէն, մանաւանդ մանրանկարչութեան արուեստին տեսակէտով գերազանցեց բոլորը շնորհիւ մեծատաղան պորոս Խոսլինի։ Հռոս ժամանակագրական կարգով կու տանք ինչ որ հասած է մեզի Հռոմէլայի հայրապետանոցէն, այդքան կորուսաներէ և կողոպւտներէ յետոյ։

Ա. — Յակոբ Գրիէ (1198)։ — Օրինակած է Ն. Ծնորհարիի Կորողիկեայց Մելիուրիւնը, Մտիփանոս Արքեպիսկոպոսին համար։ Հ. Դարպ. 634 և 703, Զարպ. 442։

Բ. — Բասիլ Սարկաւագ Գրիէ (1201)։ — Օրինակած է մասամբ, Աւետածառնչ մը, Գրիգորիս Զ. Կաթողիկոսի եղբարոր Գարոն Միխայլի համար, 1201ին, ներ-

ուս Ծնորհարիի զրած ստոյդ և ընտիր օրինակէն (Սարպ. 22)։

Գ. — Յովհաննէս Սարկաւագ Գրիէ (1214-1253)։ — Օրինակած է

1. — Աւետարան, 1214ին։ — Խաղը. Գ. 89։

2. — Աւետարան, 1253ին, Կոստանդին Ա. Կաթողիկոսի համար, որ զայն կը նույիրէ Փոսոյ Անապատին, միաբանակցելով այդ մեծաստանի հրօնաւորներուն։ — Թ. Աղբար, Բ. 357-360։ Ազգ. Հանդ. 1913, թ. 1, էջ 65։

Դ. — Բարսեղ Գրիէ, 1238ին օրինակած է Միթթար Գուշի Դատաստանագիրքը, Խուրմարեցի Մարկոս Արքեպիսկոպոսի համար։ Հայպ. 458։

Ե. — Կիլրակոս Նշ. Գրիէ եւ Ծալկող (1239-68)։ — Նախապէս, 1239ին, Դրաշտրիկի մէջ օրինակած էր Ճաշոց մը, ինչպէս տեսանք. Հռոմէլայի մէջ ար կ'օրինակէ յաջորդաբար հետեւալները։

1. — Աւետարան, 1244ին, Կոստանդին Ա. Կաթողիկոսի ծախքով, զոր կը նույիրէ Անդրէսանց Ուլիսին։ — Սարպ. թ. 151, Ա. Հատոր էջ 652։

2. — Աւետարան, 1248ին զոր կազմած է Վարդան. Մտացողն է Մտեփանոս եպս. — Սիրմ. թ. 1։

3. — Աւետարան, 1249ին, Կոստանդին Կաթողիկոսի ծախքով, Նույիրուելու համար Լեռն արքայորդին։ Կոստանդին 1255ին զան զարգարել տուած է արծաթապատ կազմով, առ Կիլիկիան ոսկերչութենէն մեզի համած թանկագին նշանարմ է. Լեռն սոյն Աւետարանը 1263 թուին նույիր կու տայ իր քրոջ Սայտայի արկին Տամ Ֆեմիին։ — Գ. Արք. Եղուէկիեանց, Մի էջ, 23, Մ. Եպս. Տէր Մովսիսիան, Ազգ. Հանդ. 1913, թ. 1, էջ 64։

4. — Ճառուց, 1268ին, Մրաբա Գունդառապլի համար. — Անսիլք. էջ 93։

Զ. — Պետրոս Երէց Կատինայեցի, Գրիէ (1248)։ — Որդի Կոստանդին Երէցի. Օրինակած է Աւետարան մը, 1248ին. — Թ. Աղբար, Բ. 350-51։

Է. — Թորոս Հռոմէլայեցի, Ռոսլին, նշ. Գրիէ եւ Մանրանկարի (1256-1272)։ — Հայ մանրանկարչութեան պարծանքն է Ռոսլին, որուն Հռոմէլայի մէջ արտադրուած զմայլելի գործերէն մեզի հասած

են եօթ Աւետարաններ և Մաշտոց մը:  
Այսպէս.

1.— Աւետարան, 1256ին օրինակուած  
զմայլելի բոլորգրով և ծաղկուած գեղեցիկ  
լուսանցաղարգերով։ Ստացողն է եղած  
Կոստանդին Ա. կթղ. Բարձրբերգիք. —  
Միւրմ. Բ. 46։

2.— Աւետարան, 1260ին, հրաշալի  
բոլորգրով և սքանչելի խորաններով, մաս-  
գաղաթի վրայ. Ստացողն է դարձեալ Կոս-  
տանդին Բարձրբերգին. — Ազգ. Հանդ.  
1913, թ. 1, էջ 67։ Միւրմ. էջ 214։

3.— Աւետարան, 1262ին, Գրիչն է  
Աւետիս Քահանայ. Կազմող՝ Առաքել Հնա-  
զանդենց։ Նկարազարգած է Խոսլին։ Այս  
Աւետարանը գրուած է Հեթում Ա. ի որդի  
Լևոն իշխանի համար. — Ազգ. Հանդ. 1913,  
թ. 1, էջ 69։

4.— Աւետարան, 1262ին, փոքր եր-  
կամագրով, մագաղաթի վրայ, Թորոս Քա-  
հանայի համար։ Նախապէս կը գտնուէր  
Աերաստիք (Թ. Աղբար, Ա. 183), այժմ  
կը գտնուի Baltimore, Walters Arts Gallery,  
No. 539։

5.— Աւետարան, 1265ին, Սարուան-  
դիքարի տէր՝ Կոստանդին թագաղիք իշ-  
խանին համար։

6.— Մատոց, 1266ին գրուած Միս,  
Աւետիք Քահանայի ձեռքով. Վարդան  
Եպիկոպոսի համար, որ այդ ժամանակ կը  
գտնուէր Կոստանդին Կաթողիկոսի մօտ  
Հռոմէկայ, ուր Նկարազարգել տուած է  
Թորոս Խոսլինի. — Ազգ. Հանդ. 1913, թ.  
1, էջ 73։

7.— Աւետարան, 1267-8ին, գրուած է  
Լևոն Բ. ի որդի Պարոն Հեթումին նույիր-  
ուելու համար։ Կազմողն է Առաքել Հնա-  
զանդենց. — Թ. Աղբար, Ա. 324։

8.— Աւետարան, 1272ին օրինակուած  
Աւետիս Գրիչն։ Ստացողն է Կեռան թա-  
գուհի. — Անահիտ, 1907, էջ 200-204։  
Միւրմ. էջ 14 և 168։

9.— Առարել Հնազանդենց նշ. Կազ-  
մարար (1260-1278). — Որդի Պօղոս սար-  
կաւագի և աշակերտ Կազմարար Սարգիս  
Քահանայի (+ 1262). Իր Կազմած շքեղ  
գործերէն ծանօթ են հետեւալները.

1.— Աւետարան, 1262ին գրուած Թո-  
րոս Քահանայի համար, և Նկարազարգուած  
Թ. Խոսլին. — Թ. Աղբար, Ա. 189։

## ԵՐԱԺԴՅԱԳԻՏՈՒՑԱԿԱՆ

ԵՐԱԺԴՅԱԳԻՏՈՒՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՄԻՋԻՆ ԴԱՐ

ԳԼՈՒԽ Գ.

J. S. Bach (1685-1750). — Երաժշտա-  
կան կրն գերգաստանի մը զաւակ, այս  
մեծ հանճարը իր ժամանակին մեծ համ-  
րաւի կը տիրանայ (թէն իր մահէն վերջ  
մօտ կէս դար կը մոոցուի) իրը գաշնակա-  
հար, երզեւոնահար, ջութակահար, երա-  
ժշտութեան ուսւուցիչ, եկեղեցական երգ-  
չախումբերու կառավարող, և իրբն երա-  
ժիշտ, երաժշտական գիտելիքներու այն  
խորունկ ճանաչողութիւնը, որուն աիրա-  
ցած է բաղդատարար պղտիկ տարիքին,

2.— Աւետարան, գրուած 1267ին, Պա-  
րոն Հեթումին նույիրուելու համար։ Գրիչ  
և ծաղկող՝ Թ. Խոսլին։ Կազմուած է  
1268ին. — Թ. Աղբար, Ա. 324-7։

3.— Աւետարան, գրուած 1272ին,  
Լևոն Գ. ի և Կեռան թագուհի համար,  
Աւետիս գրիչն։ Մազկած է Խոսլին. —  
Անահիտ, 1907, էջ 200-204։

4.— Աւետարան, գրուած 1278ին,  
Յովհաննէն Արքայեղբօր ձեռքով. — Միս.  
298։ Գալէմքարեան, թ. Հայ. Զեռ. Ար-  
քունի Մատ. Մինիին, թ. 1։

Թ. — Աւետիս Թհնի. նշ. Գրիչ (1262-  
1272). — Օրինակած է Հռոմէկայի մէջ,  
ընտիր բոլորգրով, մագաղաթի վրայ,  
1.— Աւետարան, 1262ին, Հեթումի  
որդի Լևոն իշխանին համար։ Մազկած է  
Խոսլին։

2.— Աւետարան, 1272ին, թագաժա-  
ռանգ Լևոնի և Կեռան Տրկնոց համար։  
Մազկած է Խոսլին։ Ապա նույիրուած է  
Ակներ վանքին։ — Եղանակի էջ 203-4։  
Ազգ. Հանդ. 1910, թ. 2, էջ 23։ 1913,  
թ. 1, էջ 76։ Միւրմ. էջ 168։

Նոյն անձն է Միս մէջ 1266ին Մաշ-  
տոց մը ընդօրինակող համանուն քահա-  
նային հետ։

Ն. Վ. ՄՈՎԱԿԱՆ